

## ՓՈԽՆԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՆՈՒՇԱԳԻՐ

ք.Երևան

« 26 » դեկտեմբերի 2009թ.

Նայասրանի Նանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը՝ ի դեմս հանձնաժողովի նախագահ Ռ.Նազարյանի և Նայասրանի Նանրապետության փնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը՝ ի դեմս հանձնաժողովի նախագահ Դ. Նարությունյանը (այսուհետ՝ Կողմեր), ելնելով Նայասրանի Նանրապետության փարածքում էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի արդյունավետ կարգավորման, ոլորտում արդար և բաց մրցակցության երաշխավորման և փնտեսավարող սուբյեկտների ու սպառողների շահերի պաշտպանության, փնտեսական ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովման նկատառումներից և հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում կարգավորող և մրցակցային մարմինների համագործակցության ուղղությամբ արձանագրված միջազգային առաջավոր փորձը՝ Կողմերը ստորագրեցին սույն փոխհամագործակցության հուշագիրը՝ հետևյալի մասին.

1. Նայասրանի Նանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը՝ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՏՏ օրենքի ուժով օժտված է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորման և ոլորտում մրցակցության ապահովման իրավասություններով:
2. Նայասրանի Նանրապետության փնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը՝ «Փնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՏՏ օրենքի ուժով օժտված է փնտեսական մրցակցության պաշտպանության և խրախուսման, բարեխիղճ և ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովման, հակամրցակցային գործունեության կանխարգելման, սահմանափակման և նախագգուշացման և փնտեսական մրցակցության պաշտպանության նկատմամբ վերահսկողության իրականացման իրավասություններով:

3. Իրավական հիմքերի կամ աշխատանքային արդյունավետության նկատառումներից ելնելով՝ Կողմերը կարող են դիմել միմյանց վարույթ հարուցելու եւ վարույթային ընթացակարգն արագացված կարգով իրականացնելու առաջարկությամբ:
4. Նայաստանի Նանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն աջակցում է Նայաստանի Նանրապետության անվտանգության մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին՝ իր իրավասությունների իրականացման շրջանակում էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորմանն առնչվող տեխնիկական-մասնագիտական բնույթի խորհրդարվություն փրամադրելով:
5. Նայաստանի Նանրապետության անվտանգության մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովն աջակցում է Նայաստանի Նանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ իր իրավասությունների իրականացման շրջանակում էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում մրցակցության ապահովմանն առնչվող հարցերի վերաբերյալ խորհրդարվություն փրամադրելով:
6. Կողմերը փոխանակում են իրենց գործունեության ընթացքում ձեռքբերված եւ միմյանց իրավասությունների պարզաճ իրականացման համար անհրաժեշտ տեղեկարվություն, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխյալ տեղեկարվության փրամադրումը արգելված է օրենքով:
7. Փոխանակված տեղեկարվությունը օգտագործվում է բացառապես այն նպատակով, որի համար այն փրամադրվել է:
8. Սույն փոխհամագործակցության հուշագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

**ՆՆ ՆԱՆՐԱՅԻՆ**  
**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**  
**ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՆԱՆՁՆԺՈՂՈՎ**  
**ՆԱԽԱԳԱՆ**

**ՆՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՅԱԿՅՈՒԹՅԱՆ**  
**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ**  
**ՆԱՆՁՆԺՈՂԱՎԵ ՆԱԽԱԳԱՆ**

**Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**

**Դ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**


